Հայտարարություն դոլարային պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ

2023 թվականի հունիսի 12-ից մինչև 2023 թվականի հուլիսի 6-ը ներառյալ «Լույսեր» ՓԲԸ-ն հրապարակային առաջարկի միջոցով նախատեսում է տեղաբաշխել անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր՝ հետևյալ պայմաններով.

Դասը	Անվանական արժեկտրոնային
Անվանական արժեքը	1 000 ԱՄՆ դոլար
Ընդհանուր ծավալը	4 000 000 ԱՄՆ դոլար
Քանակը	4 000 հատ
Շրջանառության ժամկետը	4 տարի
Արժեկտրոնային տոկոսադրույքը	8%
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Կիսամյակային
ISIN	AMLUYSB23ER9
Տեղաբաշխողը	«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ

Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 03/05/2023թ–ի N 1/231 Ա որոշմամբ:

Ներդրողները պարտատոմսերի ծրագրային ազդագրի տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39 հասցեում և «Լույսեր» ՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0031, Լենինգրադյան 31 բն. 12 հասցեում:

Պարտատոմսերի ծրագրային ազդագիրը, թողարկման վերջնական պայմանները, հայտ-հանձնարարականի ձևը և պարտատոմսերի գնի հաշվարկը ըստ տեղաբաշխման օրերի հրապարակվել են «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ–ի կայքում (Հղում՝ www.armbrok.am) և «Լույսեր» ՓԲԸ–ի կայքում (luyser.am):

Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները և պատշաճ կերպով դրանք ներկայացնեն տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողին առձեռն կամ Տեղաբաշխողի հետ համաձայնեցված կապի միջոցով:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է թողարկման նպատակով ստորև ներկայացված բանկերից մեկում բացված Տեղաբաշխողի հաշվեհամարներից որևէ մեկին կատարի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն.

Բանկի անվանումը	Դոլարային հաշիվ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	2500000122610101
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	1510005280430201

Ներդրողը, պարտատոմսերի ձեռք բերման համար, պարտադիր պետք է ունենա Հայաստանի Կենտրանական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում կամ որևէ այլ լիցենզավորված պահառուի մոտ բացված արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ:

Թողարկող

«Լույսեր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0031, Լենինգրադյան 31, բն 12
Հեռ՝ (+37444) 30 06 30, 30 66 30
Էլ.-փոստ՝ info@luyser.am
Կայք՝ www.luser.am

Տեղաբաշխող

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39
Հեռ՝ (+37411) 59 00 00
Էլ.-փոստ՝ armbrok@armbrok.com, ib@armbrok.com
Կայք՝ www.armbrok.com